ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. սեպտեմբերի 9-ից 12-ը Սիան (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Սիան (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն)

   2019թ. սեպտեմբերի 9-ից 12-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Չինաստանի Ժողովրդական Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի նախարարության Շանհայի համագործակցության տարածաշրջանային կազմակերպություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ «2019 թվականի Եվրասիական տնտեսական ֆորումին, որը կրում էր «Կանաչ գոտին և ճանապարհը՝ մթնոլորտային աղտոտվածության կանխարգելում և վերահսկում» խորագիրը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հետևյալ կարևոր օրակարգային հարցերը.

- Մթնոլորտային օդի աղտոտման քաղաքականություն և պլանավորում,
- Մթնոլորտային օդի աղտոտման կանխարգելում և վերահսկում, պայքար կլիմայի փոփոխության դեմ,
- Էկո քաղաքների կառուցում և համագործակցություն, փորձի փոխանակում
- Մթնոլորտային օդի աղտոտվածության կառավարում՝ էկո քաղաքների կառուցման շրջանակներում,
- Մթնոլորտային օդի մոնիթորինգ, փորձի փոխանակում:

Ֆորումին ներկա էին մի շարք երկրների բարձրաստիճան հյուրեր (Մոլդովա, Ղազախստան, Հայաստան, Ղրղզստան, Չինաստան, Ռուսաստան, Մոնղոլիա և այլն): Այն մեկնարկեց բացման պաշտոնական արարողությամբ, որին հետո հաջորդեցին 10 թեմատիկ /ֆինանսներ, էկոլոգիա, մշակութային տուրիզմ, տրանսպորտ, օդերևութաբանություն, գիտություն և տեխնիկա և այլն/ պլենար նիստեր:

Ֆորումի նպատակն էր հաստատել և զարգացնել մասնակից երկրների, խոշոր ընկերությունների, միջազգային կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների միջև բարձր մակարդակի համագործակցություն՝ վերը նշված ոլորտների ուղղությամբ:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վերոնշյալ հանդիպման շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության էկոլգիայի և շրջակա միջավայրի նախարարի տեղակալ պարոն Ժաո Յիմինգի և Սիանի քաղաքապետի տեղակալ Մա Սիանպինգի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են դեռևս 2019 թվականի ապրիլին Հայաստանի և Չինաստանի Շրջակա միջավայրի նախարարությունների միջև կնքված համագործակցության հուշագիրը և համագործակցությունն ամրապնդելու նպատակով մի շարք հարցեր.

- երկկողմանի ուղղությամբ էկոտուրիզմի զարգացում:

Ներկայացվել է Հայաստանում էկոտուրիզմի ներուժը, բնության հատուկ պահպանվող տարածքները և Հայաստանի կենսաբազմազանությունը:

- Օդի աղտոտվածության նվազեցման միջոցառումների մշակում,
- օդի մոնիթորինգի համակարգի բարելավում,
- անտառներ և քաղաքների կանաչապատում,
- թափոնների կառավարում:

8. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 10-ին Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է ֆորումի բացման պաշտոնական արարողությանը:

Օրվա երկրորդ կեսին հայկական պատվիրակությունը մասնակցել է Եվրասիական տնտեսական ֆորումի «էկոլոգիական և էկո- քաղաքների ստեղծման փորձի փոխանակման» նիստին, որտեղ հանդես եմ եկել պաշտոնական ելույթով:

Ելույթի ժամանակ ներկայացվել է Հայաստանում օդի որակի և մոնիթորինգի համակարգի բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքները և Հայաստանի հետագա քայլերը, ինչպես նաև Հայաստանի պատրաստակամությունը համագործակցության և մասնագետների միջև փորձի փոխանակման ուղղությամբ:

Սիանի փոխքաղաքապետի հետ քննարկվել է Սիանի և Հայաստանի քաղաքաների միջև հնարավոր համագործակցությունը՝ օդի որակի բարելավման և էկոքաղաքների ստեղծման ոլորտներում /կանաչապատում, տրանսպորտ, թափոնների կառավարում և այլն/:

Նիստի ընթացքում քննարկվել է նաև ուսումնական կենտրոնների միջև համագործակցությունը՝ հայ ուսանողների համար Չինաստանում կրթական ծրագրեր իրականացնելու հնարավորություններ:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

X _____

Իրինա Ղափլանյան